



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիոյան

«27» 01 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0003-22

Ձեռնարկողը՝

«Վաս Գրուպ» ՍՊԸ

Արարարի մարզ, ք. Մասիս նոր թաղամաս, 11 շ. բնկ. 57

Գործունեությունը՝ Արարարի Նորամարզի ավազի հանքավայրի «Վաս»
տեղամասի երևակումում օգտակար հանածոների
արդյունահանման նպատակով 2022-2023թ.թ. կատարվելիք
երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
Արարարի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0003-22

27 > 01 2022թ.

Արարատի Նորամարզի ավազի հանքավայրի «Վաս» տեղամասի երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2022-2023թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Վաս Գրուպ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արարատի մարզ, Նորամարզ համայնք

Ներածական մաս. Նորամարզի ավազի հանքավայրի «ՎԱՍ» տեղամասը գտնվում է Արարատի մարզի, Նորամարզ համայնքի վարչական տարածքում, բնակավայրից դեպի 2կմ հարավային ուղղությամբ: Երևակման տարածքի մոտակա բնակավայրերն են՝ Հովտաշենը(2.5կմ), Մխչյանը(5կմ), Դիմիտրովը(5կմ), Մասիսը(6կմ):

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է հատուկ և ջրային նշանակության հողերով:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզաբանել օգտակար հանածոյի հաստվածքի պարամետրերը, որակական հատկանիշները, որպես հումք «Ավազ շինարարական աշխատանքների համար» ՀՍ ԳՈՍՍ 8736-95, «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» ՀՍ ԳՈՍՍ 8267-95 տեխնիկական պահանջներին բավարարող վերջնաարտադրանքի ստացումը:

Արարատի մարզի Նորամարզի հանքավայրի «Վաս» երևակման տարածքում՝ «Վաս Գրուպ» ՍՊ ընկերությունն իր արտադրական հզորությունը մեծացնելու նպատակով, նախատեսում է իրականացնել ավազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման նպատակով հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով.

1. 4429996.0118, 8450044.7335

10. 4429013.0138 8450852.3851



- | | |
|-------------------------------|--------------------------------|
| 2. 4430049.9798, 8450063.5281 | 11. 4429052.7860, 8450815.5000 |
| 3. 4429987.8272, 8450213.4446 | 12. 4429181.9999, 8450750.5320 |
| 4. 4429859.5912, 8450405.1663 | 13. 4429258.2954, 8450734.5059 |
| 5. 4429764.9423, 8450528.1212 | 14. 4429340.1298, 8450697.7250 |
| 6. 4429708.8789, 8450579.1941 | 15. 4429450.8317, 8450647.9696 |
| 7. 4429471.8545, 8450734.4667 | 16. 4429709.7791, 8450501.7361 |
| 8. 4429278.5163, 8450799.1236 | 17. 4429729.1607, 8450481.6214 |
| 9. 4429090.7991, 8450948.7250 | 18. 4429863.6408, 8450342.0550 |

Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագիծը կազմված է «Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծի և նախահաշիվների կազմման հրահանգի» պահանջներին համապատասխան: Հաշվի է առնված տեղամասի երկրաբանական կառուցվածքն ու երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

«Վաս Գրուպ» ՍՊ ընկերությունը Նորամարզի ավազի հանքավայրի «Վաս» տեղամասում օգտակար հանածոյի ուսումնասիրության աշխատանքները նախատեսում է կատարել ստորև ներկայացվող մեթոդաբանությամբ:

Նկատի ունենալով երևակման երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունն ու չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 11 հատ մինչև 2մ խորությամբ հետախուզահորերի (22գ.մ, կամ 48մ³ ընդհանուր ծավալով) միջոցով, որոնցով կեզրագծվեն և ըստ խորության ու տարածության կուսումնասիրվեն երևակման ավազային կուտակը: Հետախուզահորի կտրվածքը ստորին մասում կազմում է մոտ 1.0x0.8մ: Հետախուզական ցանցի խտությունը կազմում է 60x180մ:

Օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր հետախուզահորերից վերցնել երկուական նմուշ: Նմուշների ընդհանուր քանակը կկազմի 22 հատ, որոնցից յուրաքանչյուրի կշիռը բազմափուլ կրճատումներից հետո նախատեսվում է հասցնել մոտ 20կգ-ի: Նմուշարկումը կատարվում է ակոսային եղանակով: Նմուշները կախված օգտակար հանածոյի բացված հզորությունից, նախատեսվում է վերցնել 2-2.5մ երկարությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.2x0.1մ չափսով: Նմուշները պետք է վերցվեն օգտակար հանածոյի շերտի տարածմանն ուղղահայաց: Բնամասում ավազի ծավալազանգվածային ցուցանիշները դաշտային պայմաններում կորոշվեն 11 հետախուզահորերի անցման ժամանակ: Քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմը կորոշվի համապատասխանաբար 6-ական նմուշներում: Նախագծված աշխատանքների իրացումը թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական գնահատականն ու հաշվարկել հանքավայրի ստատիկ պաշարներն ըստ C1 կարգի:

Ավազի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման համար նախատեսվում է օգտագործել հետախուզվող տեղամասի հետախուզահորերի անցման ժամանակ հանված ամբողջ զանգվածը: Նշված մեծածավալ տեխնոլոգիական նմուշը կենթարկվի վերամշակման ջարդիչ-տեսակավորող արտադրամասում, որի ընթացքում կմշակվի ավազի լվացման տեխնոլոգիական, կծշտվի նրա գրանուլոմետրիական կազմը: Աշխատանքի ընթացքում կատարված ծախսերի և վերջնաարտադրանքի քանակի մասին ստացած տվյալները կգրվեն հանքավայրի արդյունաբերական գնահատման հիմքում: Ուսումնասիրվող տարածքում անհրաժեշտ է կատարել 1:2000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ: Երկրաբանական քարտեզ կազմելու համար նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 9.5հա տարածքի վրա, բոլոր հետախուզահորերի գործիքային տեղադրմամբ տոպոգիիմքի վրա: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային

փորվածքները: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբի: Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում կատարել համապատասխան դիտարկումներ, որոնց արդյունքում կպարզաբանվեն օգտագործվող հատվածի գետաջրերի մակարդակի սեզոնային փոփոխությունները, գետի վարարումների քանակն ու տևողությունը: Օգտակար հանածոների ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար, դաշտային աշխատանքների ընթացքում, նախատեսվում է կատարել ռադիոմետրական չափումներ հանքերևակման ամբողջ տարածքով:

Հումքի որակական հատկանիշները պետք է ուսումնասիրվեն «Անալիտիկ» ՓԲԸ-ի փորձարկումների գիտահետազոտական լաբորատորիայում և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական ինստիտուտում:

Ռեկուլտիվացիոն աշխատանքներ չեն նախատեսվում, քանի որ տարածքը յուրաքանչյուր տարի վրածածկվում է Արաքս գետի ջրերով և կատարվում է տարեկան ցիկլով կրկնվող ավազակոպճային խառնուրդի նստվածքագոյացում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- տարածքում աշխատող տեխնիկական լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում, կամ «Վաս Գրուպ» ՍՊ ընկերության արտադրական տարածքում, բացառելով նավթամթերքների պահեստավորումը տարածքում,

- աշխատանքների ժամանակ էքսկավատորի և աշխատանքները սպասարկող մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում,

- փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում վազոն տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ,

- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում կդատարկվի հատուկ ճառայության ուժերով,

- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային պարկերում, տեղափոխում մոտակա աղբահավաք վայր(նախապես համաձայնեցնելով համայնքապետարանի հետ),

- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով,

-Արաքս գետի վարարման շրջանում երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների դադարեցում,

- օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ հետագա ուտիլիզացման, կամ երկրորդական վերամշակման համար,

- նախատեսվում է կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:



Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- Արաքս գետի ջրերի որակի մշտադիտարկում, շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,
- հայցվող տեղամասի հողերն օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

Պատճառաբանական մաս. Արարատի մարզի Նորամարզի համայնքապետարանում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև Արարատի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի N15-Ն նորմերի պահանջներով:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքներն ու դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Երկրաբանական աշխատանքները կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների, երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության նորմատիվային փաստաթղթերի և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:



- Համաձայն գետի բազմամյա դիտարկման տվյալների՝ Արաքսի վարարման շրջանը տևում է մոտ 2,5 ամիս՝ ապրիլից հունիս, հետևաբար վարարման շրջանում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները դադարեցնել և տեխնիկական միջոցները հեռացնել տեղամասից, ինչը թույլ կտա բացառել վարարման հետ կապված բոլոր խնդիրը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Վաս Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արարատի Նորամարզի ավազի հանքավայրի «Վաս» տեղամասի երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2022-2023թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ



Հ. Մեսրոպյան